

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

**27.04.2017թ.-ի թիվ 15-3 որոշում**

1. Հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 26/04/2017թ.-ի Խորհրդի նիստի թիվ 85-4.4 որոշումը և հաշվի առնելով Բանկի 2016 թվականի ֆինանսական արդյունքները՝ Բանկի 2016թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել 1,000,000,000 /մեկ միլիարդ/ ՀՀ դրամ որպես տարեկան շահութաբաժիններ:
2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 31.12.2017թ. ներառյալ, Ֆինանսական գծով Բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի հսկողությամբ, դրամական եղանակով, միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտմանը:
3. Շահութաբաժինների վճարումն իրականացնել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ (այն է՝ 28.03.2017թ.) Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն: